

**ՀՀ ԳԱԱ ՀՐ. ԱՃԱՌՑԱՆԻ ԱՆՎԱՆ ԼԵԶՎԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ**

**ԱՐՄԻՆԵ ԳՐԻԳՈՐԻ ՎԱՀԱՆՑԱՆ**

**ՀԱՅԵՐԵՆԻ, ԱՆԳԼԵՐԵՆԻ ԵՎ ՌՈՒՍԵՐԵՆԻ ԱՐԱՐՄԱՆ ԲԱՑԵՐԻ**

**ԻՄԱՍՏԱԲԱՆԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ**

**Ժ.02.02 - «Շնդհանուր և համեմատական լեզվաբանություն» մասնագիտությամբ  
բանասիրական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման  
ատենախոսության**

**ՍԵՂՄԱԳԻՐ**

**ԵՐԵՎԱՆ 2014**

Ատենախոսության թեման հաստատվել է Երևանի Վ. Բրյուսովի անվան պետական լեզվաբանական համալսարանում:

Գիտական ղեկավար՝

բ.գ.դ., պրոֆ. Գ.Ռ. Հովհաննիսյան

Պաշտոնական ընդդիմախոսներ՝

բ.գ.դ., պրոֆ. Ա.Ե. Սարգսյան

բ.գ.թ., դոցենտ Է.Հ. Ղազարյան

Առաջատար կազմակերպություն՝ Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան


Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2014թ. հունիսի 26-ին՝ ժամը 15.00-ին, ՀՀ ԳԱԱ Հր. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտում գործող ԲՈՀ-ի Լեզվաբանության 019 մասնագիտական խորհրդի նիստում:

Հասցեն՝ 0015, ք. Երևան, Գրիգոր Լուսավորչի 15:

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ՀՀ ԳԱԱ Հր. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի գրադարանում:

Մեղմագիրն առաքված է 2014թ. մայիսի 24-ին:

Մասնագիտական խորհրդի  
գիտական քարտուղար,  
բ.գ.թ., դոցենտ



Ն. Միմոնյան

Ատենախոսությունը նվիրված է հայերենի, անգլերենի և ռուսերենի **արարման բայերի**<sup>1</sup> իմաստաբանական վերլուծությանը: Լեզվաբանության մեջ ներկայումս գերիշխող ճանաչողական ուղղությունը թույլ է տալիս դիտարկել լեզվական խնդիրները մարդակենտրոն հայեցակարգի տեսանկյունից՝ բացահայտելով լեզվական միավորների տարատեսակ առանձնահատկություններ, որոնք էական նշանակություն ունեն էլեկտրոնային բառադարանների, կորպուսների մշակման ու ստեղծման համար:

Չետագոտության **առարկան** է արարման հասկացույթը հայերենում, անգլերենում և ռուսերենում: Կապված լինելով մարդու կենսագործունեության հետ՝ արարման հասկացույթը կարելի է համարել մշակութաբանական կոնստանտ, ինչպես նաև լեզվական ընդհանրույթ: Ենթադրվում է, որ յուրաքանչյուր երևույթի լեզվականացում ուրույն ձևով է իրագործվում տարբեր կառուցվածք ունեցող և նույնիսկ ցեղակցական առումով մոտ լեզուներում:

**Ուսումնասիրության նյութը:** Սույն հետազոտությունը կատարվել է նվազ լեզուների **բայական նյութի** հիման վրա: Վ. Վինոգրադովը նշում է. «Բայն <...> ամենաբարդ, ամենաընդգրկուն քերականական կարգն է: Խոսքի մասերի մյուս բոլոր կարգերի համեմատ՝ այն առավել կառուցողական է»:<sup>2</sup> Սույն ատենախոսության առարկա են արարման հասկացույթով կապված համանուն բայական խմբերը հայերենում, անգլերենում և ռուսերենում: Բառարանային համատարած ընտրանքի սկզբունքով դուրս է բերվել **արարում** հասկացույթն անվանակարգող հայերեն մոտ 140, անգլերեն 120 և ռուսերեն 110 բայ: Ընտրված բայերն արարում են ցույց տալիս իրենց ուղիղ և փոխաբերական իմաստներով, դրանց շարքում առկա են ոճական նշույթավորվածություն և տարբեր հաճախականություն ունեցող բայեր, որոնց դիտարկումն արարման բայերի շարքում անհրաժեշտ է ուսումնասիրվող նյութը հնարավորինս ամբողջական ներկայացնելու և քննելու առումով: Ատենախոսության ծավալային նկատառումներից ելնելով՝ առանձին քննության չեն ենթարկվել հարադիր բայերը և բառաբարդման միջոցով կազմված բայերը, սակայն դրանց մասին որոշակի դիտարկումներ ևս արվում են:

**Ուսումնասիրության արդիականությունը** պայմանավորված է հայ լեզվաբանության մեջ արարման բայերին նվիրված հատուկ ուսումնասիրությունների բացակայությամբ, զուգադրական վերլուծությունների

<sup>1</sup>Ահավասիկ *արարել* բային տրվող բառարանային տարատեսակ սահմանումներից ամենաընդգրկունը՝ «ստեղծարար աշխատանքով կյանքի կոչել որևէ նյութական կամ հոգևոր արժեք» (Словарь русского языка: в 4-х т. Под ред. А.П. Евгеньевой. М., “Русский язык,” Т. 4. 1984, - с. 183-184):

<sup>2</sup>Виноградов В. Русский язык. Грамматическое учение о слове. 3-е издание, М., 1986, с. 326.

կարևորությամբ, ապա և մարդու ճանաչողական գործունեության նկատմամբ աճող հետաքրքրությամբ պայմանավորված՝ արարման բայերի իմաստաբանական կաղապարի ձևավորման առանձնահատկությունների ուսումնասիրության ու տվյալ իմաստային խմբի հիման վրա հայերենի, անգլերենի և ռուսերենի բայերի կարգայնացման ընդհանուր սկզբունքների քննության անհրաժեշտությամբ:

**Ուսումնասիրության գիտական նորույթը:** Ատենախոսության մեջ առաջին անգամ բազմակողմանի քննության են առնվում հայերենի արարման բայերն անգլերենի և ռուսերենի համանուն բայերի զուգադրությամբ: Նկարագրվում են ոչ միայն ուսումնասիրվող բայախմբին բնորոշ իմաստաբանական առանձնահատկությունները, այլև քննվում են դրանց բառակազմական կաղապարները և կապակցելիությունը: Հայ լեզվաբանների կողմից հիմնականում ուսումնասիրվել են ասացական, մտածական, շարժման, հոգեվիճակային, կամային, զգացական բայերը մասնավորապես դրանց խնդրառության տեսանկյունից: Արարման բայերը մինչ օրս առանձին ուսումնասիրության առարկա չեն հանդիսացել, դրանք գրեթե ուսումնասիրված չեն հայերենում, ավելին՝ չեն քննվել այլ լեզուների զուգադրությամբ: Հարկ է նշել, որ թեմային առնչվող մեզ հայտնի գրականության մեջ նշված բայական խումբը որպես այդպիսին հստակ կերպով երբևէ չի առանձնացվել: Այդ բայախմբի որոշ միավորներ հիշատակվում են Վ. Քոսյանի աշխատություններում և անվանվում են ստեղծման գործողություն ցույց տվող և սերման/ծագման բայեր:<sup>3</sup> Ի թիվս շարժում ցույց տվող, ասացական, վերածման/փոխարկման, փոխադարձ գործողություն հատկանշող, հոգեկան տարբեր վիճակ մատնանշող և առաքման իմաստ արտահայտող բայերի «Ժամանակակից հայոց լեզու»<sup>4</sup> աշխատության մեջ հիշատակվում են նաև վերը հիշատակված ծագման/սերման բայերը: Այս հանգամանքնով պայմանավորված՝ թերևս արժևորվում է մեր ատենախոսության գիտական և գործնական նշանակությունը, քանի որ այն հայերենի արարման բայերի<sup>5</sup> համակարգված նկարագրության և բազմակողմանի քննության փորձ է:

---

<sup>3</sup>Քոսյան Վ. Ժամանակակից հայերենի բառակապակցությունները. [Գեղարվեստական և հրապարակախոսական գրականության մեջ] / Վ. Քոսյան, Խմբ.՝ Վ. Առաքելյան, Երևան. ՀՍՍՀ ԳԱ Հր. Աճառյանի անվ. լեզվի ին-տ, 1975, - 486 էջ: Քոսյան Վ. Բառակապակցական կաղապարների զարգացումը հայերենում. ՀԽՍՀ ԳԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ին-տ. – Երևան, ՀԽՍՀ ԳԱ հրատ., 1990, էջ 226-421:

<sup>4</sup>Աբրահամյան Ս., Պառնասյան Ն., Օհանյան Հ., Բաղդիկյան Խ. Ժամանակակից հայոց լեզու. Հատոր 3. Շարահյուսություն. Երևան, Հայկական ՍՍՀ ԳԱ հրատ., 1976, էջ 91-106:

<sup>5</sup>Ատենախոսության օբյեկտ հանդիսացող բայախմբի անվանումը քննարկվել և հստակեցվել է պրոֆ. Ֆ. Խլդաթյանի հետ մասնավոր զրույցում: «Արարման բայեր» եզրույթը կարելի է նախընտրելի համարել, քանի որ այն լակոնիկ է և համահունչ է հայագիտության ավանդույթներին:

**Ատենախոսության նպատակն** է նկարագրել հայերենի արարման բայերն իմաստաբանական տեսանկյունից, վերհանել դրանց իմաստային բաղադրիչները, գուգադրել դրանք անգլերենի և ռուսերենի համանուն բայերի հետ՝ այդպիսով բացահայտելով հնարավոր ընդհանրությունները և առանձնահատկությունները: Իմաստաբանական տեսակետից է քննվում նաև արարման բայերի կապակցելիությունը և բառակազմությունը: Այս նպատակին հասնելու համար ատենախոսության մեջ առաջադրվել են հետևյալ **խնդիրները**՝

1. Առանձնացնել հայերենի, անգլերենի և ռուսերենի արարման բայերի բառիմաստային խմբերը (ԲԻԽ) և ենթախմբերը,

2. Կատարել այդ ենթախմբերի եռալեզու իմաստաբանական համեմատություն՝ առանձնացնելով դրանց բնորոշ իմաստային բաղադրիչները,

3. Ուսումնասիրել արարման բայերի կապակցելիության հնարավորությունները համեմատվող լեզուներում,

4. Դիտարկել հայերենի, անգլերենի և ռուսերենի արարման բայերի բառակազմական առանձնահատկությունները՝ վերհանելով հնարավոր իմաստաբանական ընդհանրությունները և տարբերությունները,

5. Կազմել ուսումնասիրվող բայերի ընդհանրացված տիպային բառակազմական հարացույցներն (ՏԲՀ) առանձին յուրաքանչյուր լեզվի համար, ինչպես նաև համեմատվող երեք լեզուների համար ընդհանուր ՏԲՀ-ը,

6. Բացահայտել համեմատվող լեզուների ՏԲՀ-ում «դատարկ վանդակները» և պարզել բառակազմական իմաստների չիրականացման պատճառներն ու նաև այն, թե ինչ այլ միջոցներով են դրանք արտահայտվում:

Ուսումնասիրության ընթացքում առաջադրված խնդիրների լուծման համար կիրառվել են բաղադրիչային վերլուծության, բառակազմական վերլուծության և գուգադրական-տիպաբանական **մեթոդները**:

**Հետազոտության հայեցակարգային հիմքն են կազմում** Գ. Ջահուկյանի, Վ. Առաքելյանի, Ս. Էլոյանի, Ա. Աբրահամյանի, Բ. Լևինի, Ք. Ֆելքաուսի, Ք. Պինյոնի, Ջ. Լակոֆի, Է. Կուզնեցովայի, Ե. Պաղուչևայի, Լ. Վասիլևի, Ե. Կուբրյակովայի, Ռ. Մանուչարյանի և ուրիշների աշխատությունները:

**Հետազոտության տեսական և գործնական նշանակությունը:** Տվյալ ուսումնասիրության արդյունքները և ստացված տվյալները կարող են գործածվել գուգադրվող լեզուների համեմատության այլ ոլորտներում, կարող են կիրառվել միալեզու բացատրական կամ երկլեզու ու եռալեզու թարգմանական բառարանների ստեղծման գործընթացում: Ստացված տեսական ու գործնական տվյալների համադրմամբ կարելի է ստեղծել ուսումնական ձեռնարկներ ու տեղեկատուներ:

**Աշխատանքի փորձարկումը:** Հետազոտության առանձին դրույթները և արդյունքները քննարկվել են ԵՊԼՀ լեզվաբանության և հաղորդակցման

ամբիոնի նիստերում, հանրապետական և միջազգային գիտաժողովներում և հրատարակվել գիտական հոդվածների ժողովածուներում:

**Աշխատանքի կառուցվածքը** բխում է ատենախոսության առջև դրված նպատակներից և խնդիրներից. այն բաղկացած է ներածությունից, երեք գլխից, եզրակացությունից, օգտագործված գրականության ցանկից, ինչպես նաև համառոտագրություններից և հավելվածից:

**Ներածության** մեջ հիմնավորվում է թեմայի ընտրությունը, որոշարկվում են ուսումնասիրության նպատակն ու խնդիրները:

**Առաջին գլուխը**, որը վերնագրված է «Լեզվական միավորների դասակարգման խնդիրը ճանաչողական լեզվաբանության մեջ», բաղկացած է երկու ենթագլխից: Առաջին ենթագլխում («Բառապաշարի կարգայնացման ճանաչողական հայեցակերպը») ամփոփ ներկայացվում են ճանաչողական լեզվաբանության հիմնական հասկացությունները, տվյալ գիտաճյուղի զարգացման ուղին համաշխարհային և հայ լեզվաբանության մեջ:

Նույն ենթագլխում հանգամանալից ներկայացվում են հասկացույթ եզրույթի վերաբերյալ տարբեր տեսաբանների կողմից առաջարկվող սահմանումներն ու հայեցակարգերը: Հիմնավորվում է ուսումնասիրվող բայերի դիտարկումը հասկացութաբանության տեսանկյունից: Արարման հասկացույթը կարելի է լեզվական ընդհանրույթ համարել, քանի որ այն բնորոշ է բոլոր մշակույթներին: Շեշտադրվում է հասկացույթի, հասկացութային դաշտի ձևավորման (կոնցեպտուալիզացիա) և բառապաշարի կարգայնացման խնդիրների լուսաբանումը:

Հասկացույթների մշակութափոխանակում և իմաստաբանական վերլուծությունների առավել հաջող համադրությունն ակնառու է Ջ. Պոպովայի և Ի. Ստերնինի կողմից առաջարկվող սահմանման մեջ. հասկացույթը դիտարկվում է որպես «մարդու մտային կողմի բազային միավոր հանդիսացող դիսկրետ մտային գոյացություն, որն ունի համեմատաբար կարգավորված ներքին կառույց, ներկայացնում է անձի և հասարակության ճանաչողական (կոգնիտիվ) գործունեության արդյունք և համալիր հանրագիտարանային տեղեկություններ է կրում արտացոլվող օբյեկտի կամ երևույթի, հանրային գիտակցության մեջ տվյալ տեղեկության, դրա մեկնաբանությունների և վերաբերմունքի մասին»<sup>6</sup>:

Հասկացույթի խնդրի հետ անմիջական կապ ունեն նաև կարգայնացման խնդիրները: Կարգայնացումն իրականության տրոհումն է ճանաչողական տեսանկյունից, այսինքն՝ գոյաբանական (օնտոլոգիական) ողջ տիրույթի բաժանում տարատեսակ կարգային ոլորտների:

Երկրորդ ենթագլխում («Բառապաշարի իմաստաբանական նկարագրության միջոցները») ներկայացվում են բառապաշարի իմաստաբանական նկարագրման հիմնական միջոցները, այն է՝ լեզվական

---

<sup>6</sup> Попова З., Стернин И. Когнитивная лингвистика. – М., АСТ: Запад-Восток, 2010, с. 34.

միավորների խմբավորումն իմաստային դաշտերի, թեմատիկ և բառիմաստային խմբերի մեջ:

**Երկրորդ գլուխը** վերնագրված է «Բայերի դասակարգման սկզբունքներն արդի լեզվաբանության մեջ» և բաղկացած է երկու ենթագլխից, որոնցում ներկայացվում են հայ, անգլալեզու և ռուս արդի լեզվաբանության մեջ գոյություն ունեցող բայերի տարատեսակ դասակարգումները, որոշ դասակարգումներում առանձնացված են հետազոտության նյութ հանդիսացող արարման բայերը:

Առաջին ենթագլխում («Բայերի իմաստաբանական դասակարգումները հայ լեզվաբանության մեջ») քննվում են հայ տեսաբանների մոտեցումներն ու հայեցակարգերը լեզվական միավորների նկարագրման և դասակարգման խնդրի վերաբերյալ (Ա. Աբրահամյան, Գ. Ջահուկյան, Ս. Աբրահամյան, Ս. Գալստյան, Վ. Քոսյան, Հ. Օհանյան և այլք), մանրամասն լուսաբանվում է ակադեմիկոս Գ. Ջահուկյանի առաջարկած իմաստաբանական դասակարգումը:

Երկրորդ ենթագլխում («Արարման բայերն անգլալեզու և ռուս լեզվաբանության մեջ») անդրադարձ է կատարվում անգլալեզու և ռուս արդի լեզվաբանության մեջ գոյություն ունեցող հիմնական տեսություններին, որոնցում հատուկ քննության են արժանացել արարման բայերը: Մասնավորապես վերլուծվում է բայերի դասակարգումն ըստ Wordnet էլեկտրոնային բառադարանը մշակող տեսաբանների, Բ. Լևինի և Ք. Պինյոնի: Վերջինս ուսումնասիրում է արարման բայերն անգլերենում և զուգահեռներ անցկացնում այլ հետազոտողների մոտեցումների հետ՝ վերհանելով դրանց ուժեղ և թույլ կողմերը: Գոյություն ունեցող իմաստային դասակարգումներում անգլերենի արարման բայերը ներկայացվում են որպես առանձին բայական ենթախումբ, սակայն դրանք ուսումնասիրվում են կա՛մ փաստարկային տեսության, կա՛մ շարահյուսական կապակցելիության առանձնահատկությունների դիտանկյուններից: Անգլերենի նյութի ընդգրկմամբ արարման բայերի ամփոփ ուսումնասիրություն մինչ սույն հետազոտությունը կատարված չի եղել:

Սույն գլխում ներկայացվում են նաև բայերի իմաստաբանությամբ զբաղվող ռուս լեզվաբանների, մասնավորապես՝ Է. Կուզնեցովայի, Տ. Նովոսյոլովայի, Տ. Կիրիլիբեկովայի հետազոտությունները, ինչպես նաև ռուսերենի իմաստաբանական բառարանում<sup>7</sup> ակտիվ գործողության իմաստ արտահայտող բայերի շարքում առանձին ենթախմբով ներկայացված արարման բայերի

---

<sup>7</sup> Русский семантический словарь. Толковый словарь, систематизированный по классам слов и значений. Т. 1-4 / Российская академия наук. Ин-т рус. яз. им. В. Виноградова, Под общей ред. Н. Шведовой. – М.: "Азбуковник," 1998-2007.

վերաբերյալ դիտարկումները: Այդուհանդերձ, ժուս տեսաբանները նույնպես միասնական կարծիք չունեն արարման բայերի սահմանազատման վերաբերյալ:

**Երրորդ գլխում** («Հայերենի, անգլերենի և ռուսերենի արարման բայերի իմաստաբանական նկարագիրը») առանձին ենթագլուխներով ներկայացված են հայերենի, անգլերենի և ռուսերենի արարման բայերի ընդհանուր նկարագիրը, դրանց քննությունն ըստ իմաստային բաղադրիչների և իմաստային ոլորտների ու բառակազմական կաղապարների:

Առաջին ենթագլխում («Հայերենի, անգլերենի և ռուսերենի արարման բայերի ընդհանուր նկարագիրը») ներկայացվում են ուսումնասիրվող բայական խմբի ընդհանուր իմաստային հատկանիշները հայերենում, անգլերենում և ռուսերենում, մասնավորապես արարման բայերի ԲԻՄ-ի կենտրոնական բայ կամ նույնացուցիչ համարվող բայերը (*արարել-ստեղծել, to create, создавать-создавать*), դրանք քննվում են նաև ստուգաբանական տեսանկյունից՝ որոշակի նմանություններ բացահայտելով հայերենի *արարել* և անգլերենի *to create* բայերի միջև: Նշվում են նաև մի շարք բայեր, որոնք տարբեր բառիմաստային տարբերակներով ընդգրկվում են մեկից ավելի իմաստային ենթախմբերի կազմում: Այսպես, օրինակ՝ հայերենի *շինել* բայը ուղիղ իմաստով (շինություն կառուցել, սարքել)՝ մտնում է կառուցելու իմաստ արտահայտող մասնախմբի մեջ՝ ընդ որում տեղակայվելով նշված մասնախմբի միջուկային հատվածում, իսկ մյուս իմաստով (խսկց. թխել, պատրաստել, եփել)՝ ընդգրկվում է խոհարարության ոլորտի բայական խմբի ծայրամասային գոտում: Բառիմաստային ենթախմբերի փոխներթափանցելիության մեկ այլ օրինակ է *թխել* բայը, որն իր ուղիղ իմաստով (խմորից որևէ բան պատրաստել)՝ ներառվում է խոհարարության ոլորտի բայերի կազմում, իսկ փոխաբերական իմաստով (գրականության և արվեստի վատ գործ ստեղծել, ցածրորակ ոտանավոր, երաժշտություն, երգ և այլն գրել)՝ «գրել» նույնացուցիչով միավորված «արվեստի գործ ստեղծելու» իմաստ արտահայտող բայերի մասնախմբում: Այնուհետև վերլուծվում են արարման գործընթացին բնորոշ գործոնները (*գործող անձ, նյութ/հումք, գործիք/միջոց, կերպ, արդյունք*), որոնք, ինչպես ցույց է տալիս ուսումնասիրությունը, կարող են լինել պարտադիր և ոչ պարտադիր:

Այս մասում ամփոփ ներկայացվում են նաև հայերենի արարման բայերի կապակցելիության առանձնահատկությունները՝ անգլերենի և ռուսերենի գուգադրությամբ, ինչպես նաև հիմնավորվում է դրանց բառակազմական քննության անհրաժեշտությունը:

Երկրորդ ենթագլխում («Արարման բայերի քննությունն ըստ իմաստային բաղադրիչների») «արվեստի, մասնավորապես՝ գրականության և երաժշտության ոլորտի գործ ստեղծելու», խոհարարությանը վերաբերող «կերակուր պատրաստելու», «գարդարել», «աճեցնել», «նկարել» և «կառուցել»



իմաստներն արտահայտող բայերի մասնախմբերի<sup>8</sup> քննությամբ զուգադրաբար ներկայացվում են հայերենի, անգլերենի և ռուսերենի արարման բայերի իմաստաբանական կաղապարներին բնորոշ իմաստային բաղադրիչները:

Բայերի մի մասն ունի արարման ընդհանրական իմաստ («կառուցել»-ու իմաստ ցույց տվող բայախմբում, օրինակ՝ *կառուցել, կերտել, to situate, to construct, to build, строить, воздвигнуть, соорудить*), մյուսներն արտահայտում են մասնավոր իմաստներ (օրինակ՝ հայերենում և անգլերենում *շարել, մայթել, որմել, պատնեշել, առաստաղել, to dam, to bridge, to roof, to pave* բայերը): Բացի այդ՝ որոշ բայեր ոճական առումով չեզոք են և առավել գործածական են, քան մյուսները: Օրինակ՝ *մոզոնել* բռբ. («հնարել, հորինել»), *թխել* արհմբ. (գեղարվեստական գործ), *արվեստակել* հին, գրբ. («ըստ արվեստի հորինել, ճարտարել, կերտել»), *շարականել, ռուսերենում՝ отгрохать* (շինարարության ոլորտում), *стряпать, беллетризовать* (արվեստի ոլորտում) այլն: Հատկանշական է, որ «շինարարության» ենթախմբում ներառված հայերենի *առաստաղել, հատակել, որմել, կամրջել* բայերը հաճախականության ցածր գործակից ունեն, մինչդեռ անգլերենում նույն իմաստն արտահայտող բայերը ( օր.՝ *to floor, to roof, to dam, to bridge*) չափազանց գործածական են. դա բացատրվում է անգլերենում փոխակարգության (կոնվերսիա) չափազանց լայն կիրառությամբ:

Հայերենի, անգլերենի և ռուսերենի արարման բայերի զուգադրական քննությունը վեր է հանում այդ ենթախմբի իմաստաբանական կաղապարի համար էական և պարտադիր իմաստային բաղադրիչներ՝ գործող անձ, արդյունք: Մյուս իմաստային բաղադրիչները (օրինակ՝ *հուճք, գործիք, կերպ, տեղ, ժամանակ*) ոչ միշտ են առկայանում:

Երրորդ ենթազխում («Արարման բայերի քննությունն ըստ իմաստային ոլորտների և բառակազմական կաղապարների») ներկայացվում են արարման բայերի բառակազմական կաղապարները հայերենում, անգլերենում և ռուսերենում, այն, թե ինչ բառակազմական իմաստներ են առկայանում ուսումնասիրվող բայերի բառակազմական հարացույցներում և դրանցից որոնք են տիպային: Չուգադրվող լեզուների արարման բայերը պայմանականորեն

---

<sup>8</sup> I – *գրել, հորինել, հեղինակել, to write, to compose, to author, to script, писать, сочинять, слагать*, II – *եփել, տապակել, խրոպել, թխել, to cook, to fry, to barbecue, to broil, to steam, варить, жарить, вялить, тушить, парить*, III – *գարդարել, հարդարել, պճնել, գեղեցկացնել, նախշել, դրամանակել, to adorn, to beautify, to garland, to ornament, to decorate, украшать, декорировать, орнаментировать, наряжать*, IV – *աճեցնել, բուծել, բուցնել, մշակել, սնկել, ցանել, to bear, to seed, to sow, to plant, to grow, to cultivate, выращивать, сеять, сажать, разводить, размножать*, V – *նկարել, պատկերել, վրձնել, դիմանկարել, ծաղրանկարել, to draw, to paint, to caricature, to sketch, to daub, рисовать, изображать, портретировать, шаржировать, малевать*, VI – *կառուցել, շինել, կամրջել, կերտել, հիմնել, to build, to construct, to situate, to erect, строить, основать, сооружать, воздвигать, устанавливать, сколачивать*, և այլն:

խմբավորվել են երեք ենթախմբի մեջ՝ ըստ իմաստային ոլորտների, այն է՝ արվեստի, կենցաղի, արտադրության: Թե՛ կոնկրետ և թե՛ տիպային բառակազմական հարացույցները միևնույն կառուցվածքն ունեն. դրանցում առանձնացվում են գոտիներ՝ ըստ սերված բառերի խոսքիմասային պատկանելության՝ բայական, գոյականական և ածականական: Ուշագրավ է, որ հայերենի և անգլերենի «արվեստի» ոլորտին վերաբերող 14 և 21 արմատական բայերի կոնկրետ F2 ընդգրկված ածանցյալների թիվը կազմում է 86 և 131, որը ցույց է տալիս, որ համեմատվող լեզուներում բառակազմական միջին արգասավորությունը գրեթե նույնն է (հմմտ.՝ 6.14 և 6.23), մինչդեռ ռուսերենի տվյալ բառիմաստային ենթախմբի 16 արմատական բայերից սերվում է 177 ածանցյալ (11.06 միջին արգասավորությամբ): Ռուսաց լեզվի բայերի նման բարձր արգասավորությունը պայմանավորված է այդ լեզվի նախաձանցային և վերջաձանցային զարգացած համակարգով:

Կենցաղի ոլորտին վերաբերող բայերի իմաստային ենթախումբը խմբավորել ենք ըստ կենցաղային տարբեր ոլորտների՝ խոհարարության, շինարարության և արհեստների: Նշված ենթախմբերը փոխներթափանցելի են. դա նշանակում է, որ որոշ բայեր կարող են մտնել մեկից ավելի ենթախմբերի մեջ: Կենցաղի ոլորտի բայերին բնորոշ է բավականին բարձր արգասավորություն: Այսպես, հայերենի և անգլերենի արվեստի ոլորտի բայերի բառիմաստային ենթախմբի քննության արդյունքում առկա է նույն պատկերը, ըստ որի՝ երկու լեզուները բնորոշվում են գրեթե հավասար արգասավորությամբ (հմմտ.՝ հայերենի 22 արմատական բայերից սերվում է 138 ածանցյալ, անգլերենի 23 բայերից՝ 136, համապատասխանաբար՝ 6.27 և 5.91 միջին արգասավորությամբ): Ռուսերենը կրկին աչքի է ընկնում բառակազմական բարձր արգասավորությամբ. այս ենթախմբում ներառված 35 արմատական բայերից սերվում է 644 ածանցյալ (18.4 միջին արգասավորությամբ): Ավելին, այն քանակապես գրեթե մեկ ու կես անգամ գերազանցում է նույնիսկ ռուսերենի «արվեստի» բայերի բառակազմական հնարավորությունները (հմմտ.՝ 11.06 և 18.4 միջին արգասավորություն): Արդյունքում կարելի է հանգել այն եզրակացության, որ քննվող բառիմաստային խմբի թե՛ արմատական բայերի թիվն ինքնին և թե՛ դրանց դրսևորած բառակազմական սկսիվությունն ու արգասավորությունը պայմանավորված են արտալեզվական գործոններով. կենցաղն ու առօրյան առաջնային տեղ են զբաղեցնում մարդու կյանքում և համապատասխան արտացոլում են գտնում լեզվում:

Արարման բայերի ԲԻԽ-ի երրորդ իմաստային ենթախումբը կազմում են արտադրության ոլորտի բայերը, որոնք միավորվել են սեռանիշային ընդհանուր իմույթի՝ մեխանիկական մշակման սկզբունքով: Այստեղ տեղ են գտել ժամանակակից պատկերացմամբ բուն գործարանային / արդյունաբերական,

ինչպես նաև գյուղատնտեսական արտադրության, այն է՝ հողագործության և անասնապահության ոլորտներին վերաբերող բայեր:

Հայերենի արարման բայերի ԲԻՄ-ի արտադրության ոլորտի ենթախումբը բավականին բազմանդամ է, այն բաժանել ենք ավելի փոքր մասնախմբերի՝ գյուղատնտեսական արտադրության և արդյունաբերական արտադրության ոլորտների: Հատկանշական է, որ առաջին ենթախմբում ընգրկված են գրեթե բոլոր այն գործողությունների անվանումները, որոնք վաղնջական ժամանակներից կարևորագույն նշանակություն են ունեցել: Ընդ որում, արմատական բայերով են արտահայտված այդ ոլորտում դեպի վերջնական արդյունք, այն է՝ արտադրանք /օրինակ՝ ցորեն/ տանող յուրաքանչյուր քայլը, և այդ բայերն արտադրական որոշակի գործընթաց նկարագրող յուրօրինակ շղթա են կազմում: Այդ բայերից են՝ *տնկել, պատվաստել, պատրուսել, վարել, ցանել, հնձել, կալսել, երանել* և այլն: Ուշագրավ է նաև այն փաստը, որ «արտադրել» բայը, որը փաստորեն ուսումնասիրվող բառիմաստային ենթախմբի համար սեռանիշային արժեք ունի և հանդես է գալիս որպես գերիմույթ, այուամենայնիվ ներկայացված չէ արմատական բայերի շարքում: Բառակազմական արգասավորության տեսանկյունից հայերենի՝ քննվող ենթախմբի բայերը մոտ են անգլերենին. 23 արմատական բայերից սերված ածանցյալների թիվը 162 է, դա թվայնորեն արտահայտվում է 7.04 միջին արգասավորությամբ (հմմտ.՝ անգլերենի համանուն խմբի՝ 7.82 և ռուսերենի 15.1 գործակիցների հետ):

**Եզրակացության** մեջ ամփոփվել են ուսումնասիրության հիմնական արդյունքները:

1. Բառապաշարի նկարագրման միջոցներից առավել կիրառական ու հաջողված կարելի է համարել ամերիկյան լեզվաբանական դպրոցի ձեռքբերումը՝ Wordnet-ը, որն արդի լեզվաբանության մեջ թերևս արժեքավոր է իր ուրվագծած տեսական հիմքերով և բառապաշարի կազմակերպման ուրույն ձևով: Ռուս լեզվաբանների վերջին տարիներին այս ոլորտում ունեցած կարևոր ձեռքբերումներից է իմաստաբանական բառարանի ստեղծումը և վերոնշյալ Wordnet-ի ռուսական տարբերակի գործարկումը: Նշված ձեռքբերումները կարելի է կիրառել նաև հայերենի բառապաշարի ամփոփ և ընդգրկուն ներկայացման ժամանակ, որի անհրաժեշտությունը վաղուց հասունացել է:

2. Հայերենի, անգլերենի և ռուսերենի արարման բայերի զուգադրական վերլուծությունը բացահայտում է այդ լեզուներում ուսումնասիրվող արարման իմաստն արտահայտող բայական խմբի բարդ կառուցվածքը: Այդ խմբերը դրսևորում են քանակական ու բովանդակային որոշակի առանձնահատկություններ, ինչպես նաև մի շարք ընդհանուր իմաստակազմիչ հատկանիշներ: Մի շարք բայեր մաս են կազմում մեկից ավելի ենթախմբերի, քանի որ իրենց տարբեր բառիմաստային տարբերակներով ընդգրկվում են այս կամ այն ենթախմբի մեջ:

3. Արարման բայերը դիտարկվում են որպես մեկ ընդհանուր իմաստով կապված և դրանով պայմանավորված լեզվական միավորներ: Ուսումնասիրվող լեզուների բառային համակարգերում արարման բայերն իսկապես առանձին ենթախումբ են կազմում, քանի որ դրանք միավորվում են արարման հասկացության մեջ և դրա միջուկի մաս կազմում: Արարման բայերի խմբավորումը ենթախմբերի մեջ ըստ գործածության ոլորտների՝ այդ ոլորտներին բնորոշ սեռանիշ բայերի շուրջը, նույնպես արդարացված ենք համարում:

4. Հայերենի, անգլերենի և ռուսերենի արարման բայերի իմաստային բաղադրիչների վերլուծության արդյունքում առանձնացվում են պարտադիր և ոչ պարտադիր բաղադրիչներ: Որպես պարտադիր իմաստային բաղադրիչներ հանդես են գալիս գործող անձի և արդյունքի իմաստային բաղադրիչները, որոնք առկա են համեմատվող լեզուների բոլոր բայերի իմաստաբանական հիմքում: Բացի այդ՝ ուսումնասիրվող բայերի իմաստաբանական կաղապարին բնորոշ են նյութի, գործիքի և գործողության կատարման կերպի իմաստային բաղադրիչները: Որոշ բայերի իմաստաբանական կաղապարը սահմանափակվում է միայն պարտադիր բաղադրիչներով, մյուսներին բնորոշ է նաև մեկ, երկու կամ ավելի ոչ պարտադիր իմաստային բաղադրիչ: Մինևույն ժամանակ բայերը կարող են խմբավորվել ըստ տարատեսակ հավելյալ իմաստների, ընդ որում մինևույն բայը կարող է հանդես գալ մեկից ավելի ենթախմբերում:

Համեմատվող լեզուների արարման բայերի իմաստաբանական կաղապարին բնորոշ ոչ պարտադիր իմաստային բաղադրիչներից է էլակետային նյութի/հումքի բաղադրիչը, սակայն այն պարտադիր չէ մտավոր աշխատանքով ստեղծելու իմաստ արտահայտող բայերի համար: Երեք լեզուներում բայերից շատերի համար կարևորվում է գործիքի իմաստային բաղադրիչը, որը բնորոշ է թե՛ արվեստի, թե՛ կենցաղի և թե՛ արտադրության ոլորտի բայերին:

5. Հայերենի, անգլերենի և ռուսերենի արարման բայերի իմաստաբանական տարբերությունները պայմանավորված են ներլեզվական և մշակութաբանական առանձնահատկություններով: Այդ տարբերություններն արտացոլվում են հիմնականում ոչ պարտադիր իմաստային բաղադրիչների միջոցով: Հայերենի և անգլերենի արարման բայերի մեծ մասի իմաստաբանական կաղապարում առկայանում է գործողության կատարման կերպի իմաստային բաղադրիչը, որն ավելի է կարևորվում կենցաղի ու արվեստի բայական ենթախմբերում ընդգրկված բայերի դեպքում: Որոշ բայերի իմաստաբանական պատկերը լրացվում է տեղի և ժամանակի իմաստային բաղադրիչներով, սակայն այդօրինակ բայերը մեծ թիվ չեն կազմում համեմատվող լեզուներում:

6. Արարման բայերի ընդհանուր իմաստային հատկանիշներն իրենց բնույթով վերաբերում են ակտիվ գործողություն ցույց տվող բայերին. գուգադրվող երեք լեզուներում այս իմաստային խումբը բավականին ընդգրկուն է, դրա կազմում թվային գերազանցությամբ աչքի են ընկնում արհեստների և արտադրական գործընթացին վերաբերող, այսինքն՝ կիրառական և կենսական նշանակություն ունեցող բարիքների ստեղծում մատնանշող բայերը: Այն, որ գուգադրվող լեզուներից անգլերենում արտադրության ոլորտին վերաբերող բայերը քանակական և բովանդակային առումով առանձնանում են, լիովին բացատրվում է արտալեզվական գործոններով:

7. Արարման բայերի իմաստաբանությունը պայմանավորում է այդ բայերի կապակցելիությունը: Այդ բայերն անցողական են և բնութագրվում են իմաստաբանական և քերականական համակարգերի գուգաձևությամբ. «գործող անձ-գործողություն-օբյեկտ» իմաստաբանական բովանդակությունը համապատասխանում է ընդհանրացված քերականական իմաստին, որն արտահայտվում է բայի «Գոյական ուղղ. հոլ. – Բայ - Գոյական հայց. հոլ.» ձևական արժույթային կառուցվածքով: Մա կիրառելի է հայերենի և ռուսերենի դեպքում: Անգլերենի պարագայում իմաստային առումով պատկերը նույնն է, սակայն տարբեր՝ ձևաբանական արտահայտությամբ. հոլովական ձևերին այստեղ փոխարինում են շարահյուսական մակարդակի միջոցները, որոնց շնորհիվ այդ հոլովական իմաստը նախադասության մեջ հանդես է գալիս «ենթակա-ստորոգյալ-ուղիղ խնդիր» կաղապարով: Հետևաբար, ռուսումնասիրվող բայերի խմբի համար անցողականության քերականական հատկանիշը գործառության իմաստով էական է: Այն թերևս կարելի է լեզվաբանական ընդհանրույթ համարել:

8. Հայերենի և ռուսերենի արարման բայերին բնորոշ է համադրական միջոցով կրավորական սեռով հանդես գալու հնարավորությունը, ինչը չի կարելի ասել անգլերենի մասին: Մա բացատրվում է անգլերենի ձևաբանական կառուցվածքով, սակայն դա չի նշանակում, որ տվյալ իմաստը չի արտահայտվում անգլերենում. այն լիարժեքորեն արտահայտվում է, սակայն՝ վերլուծական եղանակով:

Հայերենն աչքի է ընկնում բառաբարդման լայն հնարավորություններով: Արարման բայերի մի սովոր խումբ բառաբարդման արդյունք է, ինչը հնարավորություն է տալիս մասնավորեցնելու տարատեսակ իմաստային նրբերանգներ, որոնք ռուսերենում և անգլերենում առկայանում են շարահյուսական մակարդակում: Բացի այդ՝ հայերենի արարման բայերի մեջ մեծ թիվ են կազմում հոմանիշները, որոնք մատնանշում են նաև բայերի կիրառության ոճական առանձնահատկությունները:

Ռուսերենում արարման բայերին հատուկ է հետևանքայնությունը, որն արտահայտվում է բայական կերպի շնորհիվ. ռուսերենում բայերի ճնշող մեծամասնությունը գույգ է կազմում ըստ կերպի, որն անպայմանորեն

արտահայտում է այդ հետևանքայնությունը: Ռուսերենում այս իմաստային հատկանիշն ամրակայված է լեզվի տիպաբանական-կառուցվածքային կազմում: Այս առումով հայերենն ու անգլերենը դրսևորում են որոշակի նմանություն:

9. Բառակազմական հնարավորությունների առումով ուսումնասիրվող լեզուներում առանձնանում է ռուսերենը՝ շնորհիվ զարգացած ածանցման համակարգի: Ռուսերենի արարման բայերի կոնկրետ ԲՀ-երը չափազանց բազմանդամ են, և դրանցում գերակշիռ մասը կազմում են ածանցյալ բայերը: Համեմատվող լեզուներում խնդրո առարկա բայերի տիպային ԲԻ-երի անհամեմատ մեծ թվով առաջին տեղը զբաղեցնում է ռուսերենը, որտեղ արարման բայերի ընդհանրացված ՏԲՀ-ի բայական գոտին ներկայացված է տասը ԲԻ-ով: Դրանք մասնավորեցնում են հիմնականում գործողության կատարման ժամանակային, ինչպես նաև կատարման կերպի առանձնահատկությունները: Ռուսերենի զարգացած ածանցման շնորհիվ արտահայտվում են բազմապիսի իմաստային նրբերանգներ, որոնք հայերենում և անգլերենում կարելի է առկայացնել լեզվական այլ միջոցներով, լեզվի ավելի բարձր մակարդակի միավորներով:

10. Բառակազմական տեսանկյունից համեմատվող լեզուներում արարման բայերն աչքի են ընկնում հարուստ ու բազմանդամ բառակազմական հարացույցներով: Համեմատվող լեզուներում ուսումնասիրվող ԲԻԽ-ի բայերի կոնկրետ ԲՀ-երը կառուցվածքային առումով նույնական են. դրանք բաժանվում են երեք խոսքիմասային խմբերի՝ բայական, գոյականական և ածականական: Ընդ որում, քննվող ԲԻԽ-ի բայերի կոնկրետ ԲՀ-ի հիման վրա կազմված ընդհանրացված ՏԲՀ-ը նույնպես ունեն միևնույն կառուցվածքը. դրանք բաղկացած են բայական, գոյականական և ածականական գոտիներից:

Չուգադրվող լեզուներում արարման բայերի տարբերություններն ի հայտ են գալիս նաև բառակազմական հարացույցների խոսքիմասային գոտիներում: Անգլերենի և ռուսերենի ուսումնասիրվող բայերի կոնկրետ ԲՀ-ի անդամների գերակշիռ մասը տարատեսակ նախածանցներով կազմված ու հավելյալ իմաստաբանական ձևափոխումներ արտահայտող ածանցյալ բայեր են: Ինչպես նշեցինք, համեմատվող լեզուների ուսումնասիրվող բայախմբի ընդհանրացված ՏԲՀ-ի գոյականական գոտին միատարր է և համեմատաբար բազմանդամ: Սակայն հայերենի, անգլերենի և ռուսերենի արարման բայերի ընդհանրացված ՏԲՀ-ի ածականական գոտին բազմանդամ չէ. ուսումնասիրվող երեք լեզուներին բնորոշ է միայն մեկ ընդհանուր ԲԻ, այն է՝ «գործողության կատարման համար նախատեսված»: Հայերենին և անգլերենին հատուկ ԲԻ է «սերող բայով կոչված գործողությամբ բնորոշվող», իսկ անգլերենին և ռուսերենին՝ «գործողությանը ենթարկված և այդ գործողության արդյունքը պարունակող» ԲԻ-ը:

11. Հայերենի, անգլերենի և ռուսերենի արարման բայերի ընդհանրացված ՏԲՀ-ի գոյականական գոտիները միատարր են: Ուսումնասիրվող բայերի

իմաստաբանական կադապարի և տիպային բառակազմական հարացույցի միջև նույնպես դրսևորվում են որոշակի զուգորդումներ. բառակազմական տեսանկյունից երեք լեզուների համար տիպային համարվող «գործող անձի» և «գործողության արդյունքի» ԲԻ-ն արտացոլվում են նաև այդ բայերի իմաստաբանական կադապարում որպես պարտադիր իմաստային բաղադրիչներ:

Ընդհանուր տիպային ԲԻ-ի առկայությամբ աչքի չի ընկնում ուսումնասիրվող երեք լեզուներում արարման բայերի ընդհանրացված ՏԲՀ-ի բայական գոտին. այն ներկայացված է ընդամենը մեկ տիպային ԲԻ-ով՝ «կրկին, նորից, երբեմն նորովի կատարել գործողությունը»: Սա խոսում է ոչ թե բայական փոխակերպությունների սակավության մասին, այլ ընդգծում է նշված ԲԻ-ի համընդհանուր բնույթը՝ պայմանավորված արտալեզվական գործոններով: Արարման/ստեղծման գործողություն ցույց տվող բայերն արտացոլում են «արարման» շարունակականության և վերարտադրելիության իմաստները և դրանով իսկ առկայանում հայերենում, անգլերենում և ռուսերենում իբրև ընդհանուր տիպային ԲԻ: Անգլերենի արարման բայերի համար տիպային են համարվում ևս չորս ԲԻ-եր («ենթարկել սերող բայով կոչված գործողությանը», «կատարել սերող բայով կոչված գործողությանը հակառակ գործողություն», «կատարել սխալ, ոչ ճիշտ գործողություն, որը հանգեցնում է անցանկալի արդյունքի», «անցանկալիորեն երկար կամ ինտենսիվորեն կատարել գործողությունը»):

Ատենախոսության վերջում տրված է օգտագործված գրականության և բառարանագրական աղբյուրների ցանկը, ինչպես նաև հավելված, որտեղ առանձին աղյուսակներով ներկայացված են ուսումնասիրված բայերի իմաստային մասնախմբերը:

\*\*\*

Աշխատանքի հիմնական դրույթներն արտացոլված են հետևյալ հրապարակումներում՝

1. О некоторых структурно-семантических особенностях глаголов созидания в русском, армянском и английском языках. // II Международная научная конференция “Язык и культура.” Тезисы докладов. М., 2003г., с. 106-107:
2. Հայերենի, ռուսերենի և անգլերենի «նկարել» իմաստն արտահայտող բայախմբի զուգադրական ուսումնասիրություն // Արդի բանասիրության տեսական խնդիրներ: Երիտասարդ գիտնականների միջբուհական գիտաժողով: Հոդվածների ժողովածու (Լեզվաբանություն): Երևան, «Լինգվա», 2004, էջ 91-94:
3. О структуре словообразовательных парадигм глаголов “искусства” (на материале русского, армянского и английского языков). // Проблемы современной лингвистики и методики преподавания русского языка. Материалы международной научной конференции, посвященной памяти академика В.В. Виноградова. Ереван, “Лингва,” 2004г., с. 12-13:
4. Сопоставительный анализ словообразовательных парадигм глаголов “искусства” в английском, армянском и русском языках // «Մխիթար Գոշ» գիտամեթոդական հանդես (հասարակական գիտություններ) 1[13], 2007, էջ 29-31:
5. О структуре словообразовательных парадигм глаголов лексико-семантической группы “быта” в английском, армянском и русском языках // Հանրապետական գիտական նստաշրջան՝ նվիրված ՀՀ անկախության 15-ամյակին: Նյութերի ժողովածու: Գյումրի, 2007, էջ 65-69:



**ВАГАНЯН АРМИНЕ ГРИГОРЬЕВНА**  
**СЕМАНТИЧЕСКИЙ АНАЛИЗ ГЛАГОЛОВ СОЗИДАНИЯ В АРМЯНСКОМ,**  
**АНГЛИЙСКОМ И РУССКОМ ЯЗЫКАХ**

Диссертация на соискание ученой степени кандидата филологических наук по специальности 10.02.02 – “Общее и сравнительное языкознание.”

Защита состоится 26-го июня, 2014г., в 15.00 часов, на заседании специализированного совета по лингвистике 019 ВАК в Институте языка им. Р. Ачаряна НАН РА (по адресу: 0015, г. Ереван, ул. Г. Лусаворича 15).

**РЕЗЮМЕ**

Диссертация посвящена сравнительно-сопоставительному анализу семантических особенностей глаголов созидания в армянском, английском и русском языках с целью выявления определенных лингвистических универсалий и партикулярий.

**Актуальность работы** обусловлена необходимостью проведения типологических исследований глаголов созидания в армянском, английском и русском языках в связи с отсутствием таковых, а также изучения специфики формирования семантической модели глаголов данной ЛСГ и выявления общих принципов категоризации на примере исследуемых глаголов сравниваемых языков.

Основная **цель работы** - семантический анализ глаголов созидания армянского языка в сопоставлении с английским и русским, их сопоставительное изучение с точки зрения актуализируемых релевантных семантических компонентов, а также основных деривационных моделей и комбинаторных характеристик.

**Предметом** данного исследования являются 140, 120 и 110 глаголов созидания в армянском, английском и русском языках, объединенных одноименным концептом и набранных в результате сплошной выборки из толковых словарей исследуемых языков.

**Научная новизна исследования.** В диссертационной работе впервые исследуется ЛСГ глаголов созидания армянского языка в сопоставлении с английским и русским. Описываются семантические особенности, свойственные исследуемым глаголам, а также их словообразовательные возможности и общие свойства комбинаторики.

**Основные задачи исследования:**

1. Выявление семантических особенностей глаголов исследуемой ЛСГ армянского языка в сопоставлении с английским и русским, изучение их семантики посредством определения свойственных данным глаголам семантических компонентов.

2. Изучение комбинаторных свойств глаголов созидания в исследуемых языках.
3. Исследование и сопоставление словообразовательных моделей глаголов созидания сравнимых языков с последующим выявлением общих и отличных черт.

**Теоретическая значимость исследования.** Результаты данного исследования могут способствовать дальнейшему исследованию различных ЛСГ глаголов как в пределах одного языка, так и в свете сопоставительно-типологических исследований, а также выработке оптимальной методики их описания.

**Практическая ценность исследования.** Результаты данного исследования могут быть использованы при составлении спецкурсов по сопоставительной семантике армянского английского и русского языков, а также при создании практических пособий и словарей.

**Структура работы.** Диссертация состоит из введения, трех глав, заключения, списков использованной литературы и условных сокращений, а также приложения.

**Во введении** представляются основные цели и задачи работы.

**В первой главе** освещаются основные понятия когнитивной лингвистики, анализируется проблема категоризации языковых единиц с позиций когнитивной лингвистики, обосновывается правомерность исследования глаголов созидания в свете концептологических воззрений, дается описание основных способов систематизации лексических единиц, таких как: семантическое поле, ЛСГ, тематические группы и т.д.

**Во второй главе** описываются основные классификации глагольной системы в современной армянской, англоязычной и русской лингвистической традиции, в которых представлены и исследуемые в данной работе глаголы созидания.

**В третьей главе** исследуется семантическая группа армянских глаголов созидания в сопоставлении с одноименными группами в английском и русском языках, выявляются сходства и различия, обусловленные собственно языковыми и экстралингвистическими факторами. Сопоставляются основные деривационные модели и комбинаторные свойства глаголов созидания исследуемых языков.

**В заключении** обобщаются полученные результаты.

**ARMINE G. VAHANYAN**

**SEMANTIC ANALYSIS OF VERBS OF CREATION IN ARMENIAN, ENGLISH AND  
RUSSIAN**

Thesis for the Degree of Candidate of Philological Sciences, specialty 10.02.02  
- "General and Comparative Linguistics."

The defense of the thesis will be held on June 26, 2014 at 15.00, at the session of the Specialized Council on Linguistics 019 HAC (Higher Attestation Commission) at the Institute of Language after H. Acharyan of National Academy of Sciences, RA (address: 0015, 15 G. Lusavorich St.).

**SUMMARY**

The current thesis is focused on the analysis of semantic peculiarities of verbs of creation in the Armenian, English and Russian languages and aims at identifying certain linguistic universals and particularities in them.

**Actuality of the Research**

The concept of "Creation" is found among universal cognitive and cultural concepts which have the same references but often different implications and perception in different languages. The necessity of further typological research and the absence of such, namely, in the field of verbs of creation in Armenian, English and Russian made it actual and essential to take up this research.

**Subject of the Research**

The lexical-semantic analysis in the research is based on 140 Armenian, 120 English and 110 Russian verbs of creation extracted from Armenian, English and Russian dictionaries.

**Scientific Novelty of the Research**

The uniqueness of the work is due to the lack of typological studies in verbs of creation in Armenian, English and Russian. For the first time the study of the verbs under investigation aims at identifying common principles of their categorization in the compared languages.

**Aim of the Research**

The work focuses on the semantic and lexical analysis of verbs of creation in Armenian as compared to those in English and Russian. It also aims at studying them in terms of actualized relevant semantic components, their major derivational patterns and combining characteristics.

**Objectives of the Research**

-To identify the semantic peculiarities of the given LSG of verbs of creation in Armenian in comparison with English and Russian; to investigate semantics of data by defining the semantic components that characterize the given verbs.

-To study the combining valency of verbs of creation in Armenian in comparison with those in English and Russian.

-To investigate and compare the derivational patterns of verbs of creation and reveal their similar and distinctive features in the three languages.

### **Theoretical Value of the Research**

The results of the present study might contribute to the further investigation of various lexical-semantic groups of verbs, both within a single language and in comparative typological studies. It could also be of help in working out new optimal methods of describing them.

### **Practical Value of the Research**

The results of the research might be applied in preparing special courses in comparative semantics of the Armenian, English and Russian languages, as well as in making up manuals and compiling dictionaries.

### **Structure of the Research**

The thesis comprises Introduction, Three Chapters, Conclusion, Lists of References and Abbreviations and Appendix.

The aims and purposes of the investigation are briefly substantiated in the **Introduction**.

**Chapter One** is devoted to the basic notions of cognitive linguistics and to the analysis of the categorization problem. The rightfulness of the study of verbs of creation in terms of conceptual views and methods of vocabulary systemization (semantic and thematic groups, LSGs, etc.) are also illustrated in Chapter One.

**Chapter Two** touches upon the topic of the main verb classification systems in Armenian, English and Russian, in which the verbs of creation are also included.

**Chapter Three** focuses on the analysis of the LSG of Armenian verbs of creation and their English and Russian equivalents. Similar and distinctive features of the above mentioned verbs based on linguistic and extra-linguistic factors, as well as the derivative patterns and the combining characteristics of the verbs of creation are also involved in Chapter Three.

In **Conclusion** the obtained results are summarized and evaluated.

A handwritten signature in black ink, appearing to be 'Armen' or similar, written in a cursive style.